

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԴԻՄՈՐԴԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԱՎԱՌ 2015

*Սույն ուղեցույցը բովանդակում է դիմորդների համար
անհրաժեշտ տեղեկություններ բուհի պատմության,
համալսարանում ուսուցանվող
մասնագիտությունների,
ընդունելության կարգի, ԳՊՀ ֆակուլտետների,
ուսանողներին տրվող արտոնությունների,
ուսանողական ինքնակառավարման մարմինների
մասին:*



ԳՊՀ հիմնադիր ռեկտորը փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յրանտ Խաչատուրի Յակոբյանն է: Նրա նվիրական երազանքը հայրենի եզերքում կրթօջախ հիմնելն էր, ինչը հնարավոր եղավ իրականացնել միայն Յայաստանի Յանրապետության անկախության հռչակումից հետո, երբ ՀՀ կառավարության 1993 թվականի մայիսի 5-ի որոշմամբ ազդարարվեց Գավառի պետական համալսարանի ծնունդը: Յամալսարանի հիմնադրման գործին անգնահատելի աջակցություն ցուցաբերեց Ազգային ժողովի պատգամավոր Յրանուշ Յակոբյանը: Յամախմբվեցին նվիրյալ դասախոսներ ու աշխատակիցներ, և աստիճանաբար համալսարանը կայացավ, ինքնահաստատվեց Յայաստանի Յանրապետության բուհական համակարգում՝ Գեղարքունիքի մարզում ձեռք բերելով ոչ միայն գիտական, կրթական, մշակութային, այլև սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական կարևոր նշանակություն: Յամալսարանում մեկը մյուսի հետևից բացվեցին նոր ֆակուլտետներ ու ամբիոններ, ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումները:

Այսօր համալսարանում իրականացվում են առկա և հեռակա կրթական ծրագրեր, կազմակերպվում են վերապատրաստման ու որակավորման բարձրացման

դասընթացներ, ընդլայնվում է արտաքին համագործակցության ուղեծիրը:

Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար գործում են էլեկտրոնային ուսուցման «E-learning GSU» համակարգը, էլեկտրոնային գրադարանը «E-library GSU», կիրառվում են ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ: Եվրոպական Միության կրթական ծրագրերի շրջանակում ուսանողներին ընձեռվում են Եվրոպական առաջատար բուհերում սովորելու հնարավորություններ:

Գավառի պետական համալսարանը դինամիկ զարգացող բուհ է, որը ժամանակի հրամայական պահանջներին համապատասխան, ծավալում է կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական գործունեություն, ապահովում որակյալ կրթություն, պատրաստում մրցունակ մասնագետներ:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Սիրելի՛ դիմորդներ.

Գավառի պետական համալսարանն իր հաստատուն տեղն ունի Հայաստանի Հանրապետության բուհական համակարգում: Համալսարանում՝ որպես գերակա նպատակ հռչակված են կրթության որակի ապահովումը, ակադեմիական և վարչական կարգապահության ու պատասխանատվության բարձրացումը:

Համալսարանում լիարժեքորեն գործում է երկաստիճան կրթական համակարգը: Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են առկա և հեռակա ուսուցման ձևերով: Ուսումնական գործընթացը թե՛ բակալավրիատում և թե՛ նագիստրատուրայում կազմակերպվում է կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգերը:

Սկզբունքորեն փոխվել է դասավանդման ձևը, հարստացել բովանդակությունը: Ավանդական ուսուցումը զուգորդվում է կրթական արդի տեխնոլոգիաների, համագործակցային, անձնակողմնորոշիչ, զարգացնող ուսուցման հետ, որն իրականացվում է բազմաթիվ արդյունավետ մեթոդներով:

Կարևորվել են սովորողների ինքնուրույն, անհատական աշխատանքները, ակտիվությունը գործնական, սեմինար աշխատանքների ժամանակ: Ուսանողների հետ տարվում են ամենօրյա բացատրական, ուսուցողական աշխատանքներ, ինչի արդյունքում նրանք ընթռնում են կրեդիտային սկզբունքներով ուսման առանձնահատկությունները և գիտակցաբար պատասխանատվություն ստանձնում իրենց կրթության ելքային արդյունքների համար: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկայի կազմակերպմանը, ավարտական աշխատանքներին, ամփոփիչ ատեստավորման քննություններին:

Գավառի պետական համալսարանում աշխատում են իրենց գործի իսկական նվիրյալներ, հանրապետությունում հայտնի դասախոսներ, ովքեր բարձրակարգ մասնագետներ են և զբաղվում են ոչ միայն մանկավարժական գործունեությամբ, այլև գիտահետազոտական աշխատանքներով:

Մեր դասախոսների մենագրությունները, հեղինակած դասագրքերը, բառարաններն ու ձեռնարկները գիտական արժեք են ներկայացնում՝ հարստացնելով ոչ միայն գիտության համապատասխան ճյուղի, այլև կրթական գործընթացի գիտամեթոդական հիմքերը: Փորձառու դասախոսների կողքին աշխատում են երիտասարդ մասնագետներ, ովքեր սովորում

են իրենց ավագ գործընկերներից և տարեցտարի հմտանում են գիտամանկավարժական գործունեության մեջ: Համալսարանի դասախոսները պաշտպանում են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, զեկուցումներով հանդես գալիս հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Համալսարանի գործունեության կարևոր ուղղություններից են արտաքին կապերի ընդլայնումը, միջազգային համագործակցության ծրագրերի իրականացումը, եվրոպական բուհերի հետ ուսանողների և դասախոսների ակադեմիական փոխանակումները:

Եվրոպական Միության կրթական ծրագրերի շրջանակում համալսարանի բարձր առաջադիմությամբ և սոցիալապես անապահով ուսանողներին հնարավորություն է ընձեռվում մինչև 20 ամիս ժամկետով ուսումը շարունակել Բելգիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Հունաստանի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Բուլղարիայի, Պորտուգալիայի, Լատվիայի համալսարաններում և այլ եվրոպական բուհերում:

Համալսարանում կարևորվում են ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, սովորողների հայրենասիրական դաստիարակությունը, նրանց մեջ բարձր մարդկային որակների ձևավորումը, ազգային ու համամարդկային արժեքների արմատավորումը: Այս նպատակով պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, բանավեճեր, քննարկումներ, նշվում են մեծահամբավ հայորդիների և այլ ազգի մտավորականների հոբեյվանները, իրականացվում դաստիարակչական, տեղեկատվական, ճանաչողական բնույթի ծրագրեր:

Համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ժամանակի պահանջներին համապատասխանող որակյալ կրթության ապահովման, մրցունակ մասնագետների պատրաստման համար:

Ռ. Խ. ՀԱԿՈՒՅԱՆ
ԳՊՀ ռեկտոր

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՈՒՄ ԵՎ
ՍԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ
ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ**

h/h	Մասնագիտությունը	Ընդունելության քննություններ			ուսման վարձը հազար դրամ	
		Մրցութային		Ոչ մրցութային		
1	Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ)** կամ Ֆ (գ)**		Հլգ (գ)*	270
2	Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	270
3	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)		Հլգ (գ)*	270
4	Բնապահպանություն և բնօգտագործում	Կ (գ)	Ֆ (գ)** կամ Ք (գ)**		Հլգ (գ)*	270
5	Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)	Հլգ (գ)		280
6	Իրավագիտություն	Հլգ (գ)	ՀԺՊ (գ)	Օտլ (գ)		520
7	Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ)** Կամ Օտլ (գ)**	270
8	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ (բ)	Անգլ (գ)	Հլգ (գ)		350
9	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլգ (բ)	Ռլ (գ)		Հլգ (գ)*	270
10	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	Հլգ (գ)	Մ (գ)**			280
11	Ֆինանսներ	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		360
12	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		360
13	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		360
14	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ (գ)*	350
15	Սերվիս	Ա (գ) կամ ՀԺՊ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		270
16	Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) կամ Ֆ (գ)		Հլգ (գ)*	270

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

h/h	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ
1	Կենսաբանություն	300
2	Աշխարհագրություն	300
3	Բնապահպանություն և բնօգտագործում	300
4	Պատմություն	300
5	Իրավագիտություն	620
6	Հայոց լեզու և գրականություն	300
7	Անգլերեն լեզու և գրականություն	370
8	Ռուսաց լեզու և գրականություն	300
910	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	300
11	Ֆինանսներ	390
12	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	390
13	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	390

Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձավճարները նախատեսված են 2015-2016 ուսումնական տարվա համար:

Մագիստրատուրայի դիմորդները հանձնում են համալիր քննություն մասնագիտությունից:

Բակալավորիատի դիմորդները պետք է հայտագրեն իրենց նախընտրած մասնագիտությանը համապատասխանող բոլոր քննությունները: Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և գրականություն, ինչպես նաև Անգլերեն լեզու առարկաներից բանավոր քննությունները դիմորդները հանձնում են Գավառի պետական համալսարանում, իսկ մնացած առարկաների քննությունները՝ համապատասխան դպրոցներում՝ միասնական կարգով:

ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ՀԵՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ՝

1) տեղեկանք (լուսանկարով) ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարվա շրջանավարտն այն չի ներկայացնում),

2) 6 լուսանկար (3x4 սմ չափսի),

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական), անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած կիներու մասին,

6) ընդունելության կարգով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր,

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ,

8) կենտրոնացված և ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիր:

ԳՎՎՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողները,

2) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողները,

3) երեք և ավելի անչափահաս կամ Համալսարանում երեք և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողները,

4) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողները,

5) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողները,

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցողների զավակները,

7) Համալսարանի աշխատակիցների երեխա-ուսանողները,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒՆՏԵՏ

Բանասիրությունը հումանիտար գիտություն է, որի ուսումնասիրության ոլորտում են լեզուն և գրականությունը, հետևաբար՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում ուսուցանվում են լեզվաբանական և գրականագիտական դասընթացներ: Լեզվաբանական դասընթացները գիտելիք են հաղորդում ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզուների, նաև ընդհանուր լեզվաբանական օրինաչափությունների վերաբերյալ, վեր են հանում լեզվի զարգացման ընթացքը, լեզվի դրսևորման տարբերակային ձևերի յուրահատկությունները: Գրականագիտական դասընթացները սովորողների մոտ ձևավորում են խոսքարվեստը գնահատելու և արժևորելու ունակություններ, գրական ճաշակ, գրականագիտական միտք՝ ներկայացնելով հայ և համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունները, գրականության և գրականագիտական մտքի զարգացման փուլերը:

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը ձևավորվել է 2004-2005 ուսումնական տարում՝ առանձնանալով ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետից:

Ըստ ուսուցանվող երեք մասնագիտությունների՝ բանասիրական ֆակուլտետն ունի հետևյալ բաժինները՝

- 1) Հայոց լեզու և գրականություն,
- 2) Ռուսաց լեզու և գրականություն,
- 3) Անգլերեն լեզու և գրականություն:

Համապատասխանաբար, ֆակուլտետում գործում են հետևյալ 3 ամբիոնները.

- 1) Հայոց լեզվի և ընդհանուր գրականության,
- 2) Ռուսաց լեզվի և գրականության,
- 3) Օտար լեզուների:

Ամբիոնների դասախոսական կազմն ուսումնական գործընթացի հետ միասին զբաղվում է գիտահետազոտական աշխատանքներով. բուհի դասախոսներից շատերը Հայաստանի Հանրապետությունում հայտնի գիտնականներ են, որոնց դասագրքերը, մենագրությունները և գիտական հոդվածները մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Միաժամանակ, բոլոր ամբիոններում հաջողությամբ իրենց գիտամանկավարժական գործունեությունն են ծավալել երիտասարդ և խոստումնալից շատ մասնագետներ, այդ թվում՝ ԳՊՀ-ի շրջանավարտներ:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում բոլոր երեք մասնագիտություններով ուսուցումն ընթանում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով, կրեդիտային համակարգով: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների շնորհիվ: Մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ուսուցումն ընթանում է՝ համաձայն հաստատված կրթական չափորոշիչների և ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի համապատասխան ամբիոնների մշակած կրթական ծրագրերի: Ուսանողները հնարավորություն ունեն համապատասխան մասնագիտության շրջանակներում ընտրել մասնագիտացում, մասնագիտական դասընթացներ:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ գործում են «Բանասերի ակումբ», «Խոսենք անգլերեն», «Խոսենք ռուսերեն», «Երիտասարդ լրագրող» խմբակները:

Ուսանողական գիտական ընկերությունը պարբերաբար կազմակերպում է գիտաժողովներ, ամբիոններն անցկացնում են գիտական, գեղարվեստական, ճանաչողական տարաբնույթ միջոցառումներ, ուսանողական առօրյան անցնում է աշխույժ և հետաքրքիր: Ֆակուլտետի ուսանողները հաջողությամբ մասնակցում են հանրապետական ուսանողական

միջոցառումների, միջազգային բուհական
համագործակցության ծրագրերի:

Հայոց լեզու և գրականություն

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները նախ ձեռք են բերում ընդհանուր լեզվաբանական ու գրականագիտական գիտելիքներ, ապա մասնագիտական դասընթացներում ուսումնասիրում են հայ և համաշխարհային գրականության պատմություն, գրականագիտական զանազան գիտակարգեր, հայոց լեզվի գրեթե բոլոր դրսևորումներին (գրաբար, միջին հայերեն, գրական արևելահայերեն և արևմտահայերեն, խոսակցական հայերեն, բարբառներ) վերաբերող գիտություններ, օտար լեզուներ, ծանոթանում են հայերեն տեքստի լեզվաբանական և պատմաբանասիրական վերլուծության մեթոդներին, խմբագրական աշխատանքի յուրահատկություններին: Վերջին հաշվով, սովորողների մասնագիտական ուսումնառության բուն առարկան են դառնում հայերենը և այլ լեզուներ, հայոց գրավոր և բանահյուսական ժառանգությունը, գրականությունը, պատմությունը, մշակույթը:

Ռուսաց լեզու և գրականություն

Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները նախ ձեռք են բերում ընդհանուր լեզվաբանական ու գրականագիտական, մանկավարժական, ինչպես նաև միջլեզվային հաղորդակցությանն ու մշակույթին առնչվող գիտելիքներ, միաժամանակ խորացնում են իրենց՝ ռուսերենի բանավոր ու գրավոր տարբերակների իմացությունը, սովորում են օտար լեզուներ, իսկ մասնագիտական դասընթացներում ուսումնասիրում են ռուս, հայ և համաշխարհային գրականության պատմություն,

գրականագիտական զանազան գիտակարգեր, ռուսաց լեզվի գրեթե բոլոր դրսևորումներին վերաբերող գիտություններ:

Անգլերեն լեզու և գրականություն

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում անգլերենի բանավոր ու գրավոր տարբերակների իմացություն և դրանք ազատորեն կիրառելու ունակություն՝ յուրացնելով անգլերենի հնչյունաբանական ու քերականական օրինաչափությունները, հիմնական բառապաշարը: Սովորում և տիրապետում են նաև գերմաներենին, զուգահեռաբար ձեռք են բերում ընդհանուր լեզվաբանական ու գրականագիտական, մանկավարժական, ինչպես նաև միջմշակութային հարաբերություններին ու միջազգային հաղորդակցությանը, լեզվի և մտածողության փոխհարաբերություններին, հայերենի և օտար լեզուների համեմատական քննությանն առնչվող գիտելիքներ, ուսումնասիրում են հայ և համաշխարհային գրականության պատմություն, անգլերեն լեզվին վերաբերող տարբեր գիտակարգեր:

Ֆակուլտետում մագիստրոսական ուսուցումն ընթանում է հետևյալ ծրագրերով՝

- 1) Հայ գրականության պատմություն,
- 2) Ժամանակակից հայոց լեզու,
- 3) Ռուս գրականության պատմություն,
- 4) Ռուսաց լեզու և թարգմանչական գործ,
- 5) Անգլերեն լեզու և թարգմանչական գործ:

Մագիստրատուրայում սովորում են ինչպես ԳՊՀ-ի, այնպես էլ հանրապետության այլ բուհերի բակալավր շրջանավարտներ:

Մագիստրատուրայի ուսանողները, գիտության տարբեր բնագավառների մեջ խորանալուն զուգընթաց, ձեռք են բերում գիտական աշխատանք կատարելու հմտություններ, գրում են ռեֆերատներ, էսսեներ, հոդվածներ, հանդես են գալիս զեկուցումներով, ծանոթանում են դասախոսական աշխատանքի առանձնահատկություններին, պատրաստում են իրենց գիտական առաջին լուրջ աշխատանքը՝ մագիստրոսական թեզը:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում դասավանդում են գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, պրոֆեսորներ, դոցենտներ և ասիստենտներ:

Ֆակուլտետում սովորում են շուրջ չորս հարյուր ուսանողներ:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում դիմորդների ընդունելությունը կատարվում է՝

- 1) Հայոց լեզու և գրականություն,
- 2) Ռուսաց լեզու և գրականություն,
- 3) Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություններով:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետը ձևավորվել է 1993թ-ին: Բնագիտական ֆակուլտետն իրականացնում է կրթական ծրագրեր՝ հետևյալ մասնագիտությունների գծով՝

- 1) Աշխարհագրություն,
- 2) Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա,
- 3) Կենսաբանություն,
- 4) Բնապահպանություն և բնօգտագործում,
- 5) Քարտեզագրություն և կադաստրային գործ,
- 6) Սերվիս,
- 7) Դեղագործական քիմիա:

Ֆակուլտետում գործում են հետևյալ ամբիոնները՝

- 1) **Աշխարհագրության,**
- 2) **Ինֆորմատիկայի և Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների,**
- 3) **Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի:**

Ամբիոնների դասախոսական կազմը համալրված է մանկավարժական և գիտական աշխատանքի մեծ փորձ ունեցող գիտության դոկտորներով, պրոֆեսորներով, թեկնածուներով և դոցենտներով: Ֆակուլտետի դասախոսների ջանքերով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, բուհական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, կենսաբանական բառարաններ, գիտական հոդվածներ: Դասախոսները հայտնի են ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև արտերկրում:

Ամբիոններին կից գործում են կենսաքիմիայի, կենսաբանության, քիմիայի, էլեկտրատեխնիկայի լաբորատորիաներ, համակարգչային երեք լսարաններ:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում բոլոր մասնագիտություններով գործում է երկաստիճան կրթական համակարգ: Շրջանավարտներին շնորհվում են բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններ: Ուսուցումն ընթանում է

ըստ հաստատված կրթական չափորոշիչների և ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի համապատասխան կրթական ծրագրերի:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում գործում են ուսանողական գիտական ընկերությունը, «Բնագետի ակումբ»-ը, տարբեր սպորտային խմբակներ: Ֆակուլտետում ավանդույթ է դարձել՝ ըստ մասնագիտությունների ուսանողական գիտաժողովների կազմակերպումը: Ֆակուլտետի ամբիոնները, ուսանողական խորհրդի հետ համատեղ, անցկացնում են գիտական, զեղարվեստական, դաստիարակչական բնույթի միջոցառումներ: Ուսանողները մասնակցում են հանրապետական և միջազգային բուհական համագործակցության ծրագրերի:

ԳՊՀ բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողներին հովանավորում են տարբեր բարերարներ: Ներկայումս Բնագիտական ֆակուլտետի ուսանողներն օգտվում են «Ժիրայր Նիշանյան հիմնադրամի կրթավճար» ծրագրի, «ՎիվաՍել-ՄՏՍ կրթական ֆոնդի» և «Օրանժ. Հայաստան» հիմնադրամի կրթաթոշակներից:

Բնագիտական ֆակուլտետում ուսուցանվող բոլոր մասնագիտություններով գործում է մագիստրատուրա, որտեղ հատկացվում են անվճար տեղեր:

Աշխարհագրություն

Աշխարհագրությամբ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները հիմնարար գիտելիքներ են ձեռք բերում բնական երևույթների, աշխարհի և, մասնավորապես, Հայաստանի բնության և տնտեսության, դրանց զարգացման հնարավորությունների ու միտումների վերաբերյալ: Բացի մասնագիտական առարկաներից, սովորողներն ուսումնասիրում են հարակից բնագիտական, սոցիալ-տնտեսական դասընթացներ:

Ուսանողները յուրացնում են աշխարհագրության հիմնական հասկացություններն ու կատեգորիաները, աշխարհագրական գիտությունների համակարգը, զարգացման փուլերը, աշխարհագրական հայտնագործությունների պատմությունը, պատկերացում են կազմում երկրագնդի թաղանթների կազմի ու կառուցվածքի, դրանց փոխազդեցության մասին: Տիրապետում են տնտեսական և սոցիալական աշխարհագրության հիմնարար տեսություններին ու արդի հայեցակարգերին, տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացման աշխարհագրական օրինաչափություններին:

Աշխարհագրության բաժնի ուսանողների համար առանձնահատուկ կարևորություն ունեն ուսումնական և արտադրական պրակտիկաները, որոնք անցկացվում են ոչ միայն Գեղարքունիքի, այլև Հայաստանի Հանրապետության մյուս մարզերում:

Աշխարհագրության մասնագիտությամբ կադրեր են պատրաստվում նաև մագիստրատուրայի մակարդակով:

Աշխարհագրության բաժինն ավարտած ուսանողները կարող են աշխատել հանրակրթական դպրոցներում, գիտական հիմնարկներում, հիդրոօդերևութաբանական կայաններում, զբոսաշրջության և այլ բնագավառներում:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի բակալավրիստում և մագիստրատուրայում շրջանավարտներ են պատրաստվում Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա մասնագիտությամբ:

Ուսման առաջին չորս տարիների ընթացքում (բակալավրիատում) ուսանողները հիմնարար գիտելիքներ են ստանում համակարգչային տեխնիկայի, ինֆորմատիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմացիոն և կառավարման համակարգերի, համակարգչային ցանցերի, տվյալների բազաների ու ծրագրավորման բնագավառներում:

Սագիստրատուրայում առավել խորացված ուսումնասիրվում են համակարգչային ցանցերը և ծրագրավորման ժամանակակից լեզուները, ինչպես նաև ձեռք է բերվում իմացություն արհեստական բանականության համակարգերի, ավտոմատացված (ինքնաշխատ) նախագծման համակարգերի, ինֆորմացիայի պաշտպանության մեթոդների, ժամանակակից նաև տեխնոլոգիաների և այլ բնագավառների մասին:

Մասնագիտական դասընթացների շարքում հատուկ տեղ է հատկացվում բարձր մակարդակի ծրագրավորման լեզուների (C++, C#), ինչպես նաև ճարտարագիտական (MATLAB) և ինտերնետային ծրագրավորման (JAVA, HTML) լեզուների դասավանդման և դրանց գործնական յուրացման հարցերին: Բակալավրիատում և մագիստրատուրայում մասնագիտական կրթությունը զուգակցվում է ընդհանուր բնագիտական, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների հետ:

Ուսանողներն ինֆորմատիկայի և ծրագրավորման գործնական աշխատանքներն անցկացնում են համակարգչային երեք լսարաններում, իսկ էլեկտրատեխնիկայի և սխեմատեխնիկայի գործնական աշխատանքները՝ համապատասխան լաբորատորիայում: Համակարգչային լսարաններն ապահովված են ինտերնետ կապով:

Բակալավրիատի ուսանողներն ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաներն անցկացնում են այն հաստատություններում, որոնք զբաղվում են ինֆորմացիայի ավտոմատացված մշակման, ժամանակակից տեխնոլոգիական միջավայրի ձևավորման աշխատանքներով:

Մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներն անցկացվում են գիտական ղեկավարների կողմից որոշված գիտակրթական հաստատություններում:

Կենսաբանություն

Կենսաբանությունը ժամանակակից բնագիտության արագ զարգացող ուղղություններից մեկն է: Գավառի պետական համալսարանում Կենսաբանություն մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում գիտելիքներ բուսաբանության, կենսաբանության, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, զենետիկայի, կենսաքիմիայի, մանրէաբանության և այլ բնագավառների վերաբերյալ: Ծանոթանում են կենսաբանության հայեցակարգերին ու սկզբունքներին, կենսաբանության հետ կապված ժամանակակից հիմնախնդիրներին, ստանում են անհրաժեշտ գիտելիքներ էկոլոգիական և էվոլյուցիոն գործընթացների վերլուծության մեթոդների ու մոդելավորման մասին:

Ժամանակակից պահանջներին համապատասխան՝ ուսանողները գիտելիքներ են ձեռք բերում գեմի կառուցվածքի, զենետիկական վերլուծության սկզբունքների, մեթոդների, բնական, մարդածին գործոնների մուտագեն ազդեցությունների և դրա հետ կապված՝ ժառանգական, ձեռքբերովի հիվանդությունների պատճառների, դրանց կանխման միջոցների մասին:

Ուսանողները տիրապետում են կենդանի համակարգերի կենսաքիմիական հետազոտության և վերլուծության մեթոդներին, որոնք հաջողությամբ օգտագործվում են կլինիկական և քիմիական լաբորատորիաներում՝ գործնական աշխատանքի ընթացքում:

Կենսաբանության գծով բակալավրիատի կրթական աստիճանում ուսանողների ձեռքբերած տեսական գիտելիքներն ամրապնդվում են ուսումնական և արտադրական պրակտիկաների ընթացքում: Ուսուցման երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում, խորացվում են տեսական և գործնական գիտելիքները, ուշադրություն է դարձվում հատկապես կիրառական հմտությունների և ունակությունների զարգացմանը:

Մագիստրատուրայում, բացի մասնագիտական հատուկ դասընթացների դասավանդումից, կարևորվում է մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքը:

Մագիստրոսական թեզերը հիմնականում կրում են փորձարարական բնույթ և վերաբերում են կենսաբանության արդի հիմնախնդիրներին:

Մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներն անցկացվում են ԳՊՀ-ում, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի, Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտներում և այլ գիտական կենտրոններում: Կենսաբանության բաժնի շրջանավարտները կարող են աշխատել ինչպես ուսումնական և գիտական հիմնարկներում (բուհեր, հանրակրթական դպրոցներ, գիտահետազոտական ինստիտուտներ), այնպես էլ սննդարդյունաբերության, կենսատեխնոլոգիայի տարբեր բնագավառներում:

Բնապահպանություն և բնօգտագործում

Բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները գիտելիքներ են ստանում բուսական ու կենդանական համակարգերի և բնության փոխհարաբերությունների, օդի, ջրի, հողերի, համաաշխարհային օվկիանոսի աղտոտման աղբյուրների և դրանք կանխելու եղանակների ու մեթոդների վերաբերյալ՝ դրանք պայմանավորելով ազգաբնակչության առողջական վիճակի, մշակովի բույսերի բերքատվության բարձրացման և բուսական ու կենդանական տեսակների կենսաբազմազանության պահպանման առանձնահատկությունների հետ:

Ուսանողները ծանոթանում են համընդհանուր և տարածաշրջանային էկոլոգիական համակարգերին, բնագիտության հիմնարար սկզբունքներին, արտադրության տարբեր բնագավառներում անթափոն տեխնոլոգիաների ներդրման սկզբունքներին: Հիմնարար, տեսական և գործնական գիտելիքներ են ստանում շրջակա միջավայրն աղտոտող նյութերի վնասազերծման վերաբերյալ, կարողանում են անցկացնել բնապահպանական

(էկոլոգիական) փորձաքննություններ, համապատասխան արտադրական ձեռնարկությունների համար կազմել անհրաժեշտ էկոլոգիական փաստաթղթեր, կազմակերպել բնապահպանական մշտադիտարկում (մոնիթորինգ), գնահատել և կանխատեսել բնական միջավայրի մարդածին ազդեցությունների փոփոխությունները:

Բակալավրիատում սովորող ուսանողները պարտադիր անցնում են ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաներ: Բակալավրիատի շրջանավարտները կարող են ուսումը շարունակել մագիստրատուրայում: Մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներն անցկացվում են Գավառի պետական համալսարանում, «Սևան» ազգային պարկում և Երևանի կրթական ու գիտահետազոտական կենտրոններում:

Բնապահպանություն և բնօգտագործում բաժնի շրջանավարտները կարող են աշխատել բնապահպանության և բնօգտագործման տարբեր բնագավառներում, գիտահետազոտական ինստիտուտներում, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում ու մասնագիտացված այլ հաստատություններում:

Քարտեզագրություն և կադաստրային գործ

Հայաստանի Հանրապետությունում արմատական փոփոխություններ է կրել տնտեսական համակարգը, առաջացել են տնտեսավարման նոր ձևեր, ստեղծվել են բազմաթիվ ու բազմատեսակ ընկերություններ, ձեռնարկություններ: Դրանց աշխատանքների ծրագրման, գործունեության կազմակերպման, միասնական, արդյունավետ հարկային դաշտի ստեղծման համար անհրաժեշտ են հաշվարկող, գույքագրող, գնահատող որակյալ մասնագետներ, այսինքն՝ կադաստրային գործի գիտակներ: Քարտեզագրության և կադաստրի մասնագետների կարիքը կա տնտեսության բոլոր ոլորտներում, երբ գործը վերաբերվում է առանձին օբյեկտների տեղաբաշխմանը և ընդհանուր համակարգում նրանց տեղի ու դերի որոշմանը:

Կադաստրային գործընթացը հնարավորություն է տալիս կանոնակարգել տարբեր տնտեսավարողների գործունեությունը՝ նրանց աշխատանքի համար ստեղծելով ելակետային հավասար պայմաններ, հավասար հարկային դաշտ:

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության գծով բարձրորակ մասնագետների պատրաստման համար համալսարանն ունի բարձր որակավորում ունեցող ուսումնասօժանդակ և դասախոսական կազմ, գործնական աշխատանքներ կատարելու ուսումնական հրապարակ, քարտեզներ, դաշտային աշխատանքի ընթացքում հավաքած նյութերի նշակման համար անհրաժեշտ համակազգային կաբինետներ:

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության շրջանավարտները կարող են աշխատել հանրապետության տարբեր գերատեսչություններում, իրականացնել հանրապետության ամբողջ տարածքի հողի, անշարժ գույքի կադաստրային աշխատանքները, միաժամանակ ապահովել Գեղարքունիքի մարզի հողի, անշարժ գույքի, տնտեսավարող տարբեր սուբյեկտների գործունեության հաշվարկումը, քարտեզագրումը, համալիր վերլուծության արդյունքների գնահատումը:

Շրջանավարտները կարող են աշխատել Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոնում, Պետական կադաստրի ստորաբաժանումներում, բնական ռեսուրսների գնահատման, բնօգտագործման, հողօգտագործման, հողաբարելավման, էկոլոգիական խնդիրների լուծման, հասարակական կյանքի տարբեր բաղադրիչների արդյունավետ տեղաբաշխմամբ զբաղվող գերատեսչություններում:

Սերվիս

Սերվիսի մասնագիտությունն առաջացել է՝ ելնելով հասարակական պահանջից: Կապված Հայաստանի Հանրապետության նոր տնտեսական քաղաքականության հետ՝ աստիճանաբար նոր որակ է ստանում սպասարկման ոլորտը, որն արագ ընդլայնվում է, ստեղծվում են սերվիսի ու սպասարկման բազմաթիվ նոր ձևեր ու օբյեկտներ: Խնդիրը յուրաքանչյուր տարածաշրջանի համար սերվիսի նպատակային ձևերի ընտրությունն է և օբյեկտների արդյունավետ տեղաբաշխումը, տնտեսական ու սոցիալական առավելագույն օգուտների ապահովումը:

ՀՀ տնտեսության արագ զարգացող և մեծ հեռանկարներ ունեցող ոլորտը զբոսաշրջությունն է (տուրիզմը) և հատկապես՝ միջազգային

զբոսաշրջությունը: Մի կողմից հանրապետությունում կա սերվիսի (սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության) զարգացման համար անհրաժեշտ բնական և սոցիալ-տնտեսական ներուժ, մյուս կողմից՝ այն դեռևս փոքր չափով է օգտագործվում: Պատճառը ոլորտին անհրաժեշտ որակյալ մասնագետների՝ կազմակերպիչների պակասն է: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է ունենալ «Սերվիս» համալսարանական կրթությամբ մասնագետներ: Սերվիսի մասնագիտությամբ ուսանողների համար առանձնահատուկ կարևորություն կունենան ուսումնական և արտադրական պրակտիկաները, որոնք կանցկացվեն Գեղարքունիքի մարզի և հանրապետության սերվիսի ոլորտի տարբեր հաստատություններում՝ հյուրանոցներում, առողջարաններում, զբոսաշրջության գործակալություններում, առևտրի, կենցաղային սպասարկման օբյեկտներում և այլուր:

«Սերվիս» մասնագիտությունը ստացած շրջանավարտները կարող են աշխատել սերվիսի ոլորտի ռեկրեացիոն (առողջության վերականգնման), հյուրընկալության, զբոսաշրջության, առևտրի, կենցաղային սպասարկման և այլ կառույցներում:

Սերվիսի ոլորտի, հատկապես տեղական և միջազգային զբոսաշրջության, զարգացման մեծ ներուժը՝ տարածքի առողջարար կլիման, հրաշագեղ լեռները, գեղատեսիլ լանդշաֆտները, փիրուզյա Սևանն ու լեռնային գեղատեսիլ լճերը, անուշահամ ու հանքային աղբյուրները, բնության և պատմամշակութային հուշարձանները, գյուղերում ազատ բնակելի (հյուընկալության) ֆոնդը, ազգային գեղեցիկ ավանդույթները, էկոլոգիապես մաքուր սնունդը, ազատ աշխատուժը բացառիկ հնարավորություններ են ստեղծում Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Սերվիսի մասնագետները խնդիր ունեն նախագծելու և կյանքի կոչելու մարզի ողջ տնտեսության առաջընթացն ապահովող ծրագրեր:

Դեղագործական քիմիա

Դեղաբանությունը բժշկության պահանջված բնագավառներից մեկն է: Առանց ժամանակակից դեղաբանության, նորագույն պատրաստուկների ստացման և գործնական բժշկության մեջ դրանց նպատակային կիրառության՝ հնարավոր չէր լինի հիվանդությունների կանխարգելումը և բուժումը: Այդ իմաստով ժամանակակից

բժշկության պահանջներին համապատասխանող դեղագործ քիմիկոսների պատրաստումը կարևոր խնդիր է:

Գավառի պետական համալսարանում դեղագործական քիմիա մասնագիտությամբ բակալավրի հիմնական կրթական ծրագրի շրջանակում ուսանողները ձեռք են բերում համապատասխան գիտելիքներ դեղաբանության ուսումնասիրության օբյեկտների ու մեթոդների, գիտական սկզբունքների, դեղերի պատրաստման մեթոդաբանության, մասին: Շրջանավարտները համապատասխան գիտելիքներ են ստանում օրգանիզմի ֆիզիոլոգիայի, կենսաքիմիայի և գենետիկական առանձնահատկությունների մասին, տիրապետում են նարդու օրգանիզմի հոմեոստազն ապահովող մեխանիզմներին, հիմնարար գիտելիքներ ստանում օրգանիզմի իմունիտետի ձևավորման, իմունային ռեակցիաներն ապահովող պրոցեսների և դեղամիջոցների կիրառման միջոցով դրանք ակտիվացնելու վերաբերյալ: Կկարողանան բուժական ու կիրառական նպատակներով արդյունավետ և նպատակային օգտագործել բնական ռեսուրսները, դեղաբույսերից ստացված պատրաստուկները: Կարևոր գիտելիքներ կստանան գենային ճարտարագիտության մեթոդների դեղերի կենսատեխնոլոգիայում կիրառելու վերաբերյալ:

Ուսանողները կտիրապետեն գենետիկական վերլուծության սկզբունքներին, բնական և մարդածին մուտագեն գործոնների ազդեցություններին, դրանց առնչվող ժառանգական ու ձեռքբերովի հիվանդությունների պատճառներին և դրանց կանխարգելման դեղաբանական միջոցներին: Կուսումնասիրեն կենդանի համակարգերի կենսաքիմիական անալիզի և ուսումնասիրության մեթոդները, որոնք կիրառվում են կլինիկական ու քիմիական լաբորատորիաներում գործնական աշխատանքի ընթացքում:

Բակալավրի կրթական աստիճանում դեղագործական քիմիայի որակավորմամբ շրջանավարտների տեսական գիտելիքներն ամրապնդվում են ուսումնական և արտադրական պրակտիկաների ընթացքում:

Ուսուցման երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում, խորացվում են սովորողների տեսական ու գործնական գիտելիքները և հատկապես նրանց կիրառական ունակությունները: Մագիստրատուրայում, մասնագիտական հատուկ դասընթացներին զուգահեռ, կարևոր ուշադրություն է դարձվում մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքին: Մագիստրոսական թեզերը

հիմնականում կրում են փորձարարական բնույթ և վերաբերում են դեղաբանության արդի հիմնախնդիրներին:

Մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներն անցկացվում են Գավառի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում, ԳԱԱ Օրգանական դեղագործական քիմիայի գիտատեխնիկական կենտրոնում, Երևանի պետական համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնում և այլ գիտական կազմակերպություններում:

Դեղագործական քիմիա մասագիտությամբ շրջանավարտները կարող են աշխատել դեղագործական և դեղարտադրական կազմակերպություններում, կենսաքիմիական և կլինիկական լաբորատորիաներում, դեղատներում ու կենսատեխնոլոգիայի տարբեր բնագավառներում:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում դիմորդների ընդունելությունը կատարվում է՝

- Աշխարհագրություն,
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա,
- Կենսաբանություն,
- Բնապահպանություն և բնօգտագործում,
- Քարտեզագրություն և կադաստրային գործ,
- Սերվիս,
- Դեղագործական քիմիա մասագիտություններով:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասագիտությունների ֆակուլտետը ձևավորվել է 2004 թվականին: Ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն կրթական ծրագրեր՝ հետևյալ մասագիտությունների գծով՝

- 1) Իրավագիտություն,
- 2) Պատմություն,
- 3) Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության):

Համապատասխանաբար գործում են երեք ամբիոններ՝

- 1) **Իրավագիտության,**
- 2) **Պատմության,**
- 3) **Հասարակական գիտությունների:**

Ֆակուլտետն ունի որակյալ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ:

Ամբիոններում հաջողությամբ իրենց գիտամանկավարժական գործունեությունն են ծավալում նաև Գավառի պետական համալսարանի շրջանավարտները: Ուսուցումը կազմակերպվում է երկաստիճան կրթական համակարգով: Բակալավրիատում ուսման տևողությունը բոլոր երեք մասնագիտությունների գծով չորս տարի է, իսկ մագիստրատուրայում՝ երկու տարի:

2007 թվականից ներդրվել է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), ըստ որի մասնագիտական որակավորումը շնորհվում է ուսումնական ծրագրերով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի կուտակման արդյունքում: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և մասնագիտական դասընթացների շնորհիվ: Մասնագիտական ուսուցումն ընթանում է՝ ըստ հաստատված կրթական չափորոշիչների և Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում գործող ծրագրերի:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում ակտիվորեն գործում են ուսանողական խորհուրդը, ուսանողական գիտական ընկերությունը, պատմաբանի ակումբը, իրավաբանական կլինիկան, նկարչության ստուդիան, դեկորատիվ

դիզայնի ստուդիան: Ուսանողական գիտական ընկերությունը պարբերաբար կազմակերպում է գիտաժողովներ, ամբիոնների կողմից անցկացվում են գիտական, ճանաչողական, ուսուցողական, մշակութային բնույթի միջոցառումներ: Ֆակուլտետի ուսանողները հաջողությամբ մասնակցում են հանրապետական ուսանողական միջոցառումներին, միջազգային բուհական համագործակցության

ծրագրերին: Ուսանողական առօրյան հետաքրքիր է ու բովանդակալից:

Իրավագիտություն

Որակյալ իրավաբանների պահանջը պայմանավորված է նրանով, որ իրավագետի մասնագիտական գործունեությունն առնչվում է հասարակական ու պետական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին և առաջին հերթին ուղղված է մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը: Իրավագիտություն մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրին համապատասխան՝ ուսանողները ձեռք են բերում ընդհանուր հումանիտար գիտելիքներ, ուսումնասիրում լեզուներ, տիրապետում համակարգչային տեխնիկային, ստանում հիմնարար գիտելիքներ իրավագիտության ոլորտում: Ուսումնական ծրագրով նախատեսված՝ իրավաբան ուսանողների պրակտիկական կազմակերպվում է դատարաններում, իրավապահ մարմիններում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ձեռք են բերում գործնական հմտություններ, իրավական գիտելիքները կիրառելու կարողություններ: Ուսանողները գործնական վերապատրաստում են անցնում նաև Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայում, որի շրջանակներում մասնակցում են հանրապետական և միջազգային ծրագրերի, անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցում քաղաքացիներին, ինչպես նաև սեմինարներ են կազմակերպում մարզի հանրակրթական դպրոցներում:

Իրավագիտություն մասնագիտությամբ սովորողն ուսանում է ընդհանուր և ճյուղային իրավագիտական դասընթացներ: Իրավագիտության բաժնի շրջանավարտը տիրապետում է հիմնարար իրավական գիտելիքների, ազգային և միջազգային իրավական համակարգերի առանձնահատկություններին, նորմատիվ իրավական ակտերին, դառնում է բազմակողմանի զարգացած անհատ, տիրապետում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերին, կարող է աշխատել ՀՀ դատական, դատախազական համակարգերում, պետական, տեղական

ինքնակառավարման մարմիններում և իրավապաշտպան կառույցներում:

Պատմություն

Աշխարհում ցանկացած ժողովրդի ինքնության ապահովման և հետագա առաջընթացի համար անհրաժեշտ է ժողովրդի պատմության ուսումնասիրումը, ինչը հատկապես կարևորվում է այնպիսի փոքր ժողովուրդների համար, ինչպիսին հայերն են:

Պատմություն մասնագիտությամբ սովորող բակալավր ուսանողները ձեռք են բերում ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, բնագիտական և մանկավարժական գիտելիքներ, տիրապետում օտար լեզուների, համակարգչային տեխնիկայի, արդի տեղեկատվական տեխնոլոգիաների: Մասնագիտական դասընթացներում ուսումնասիրում են մարդկային քաղաքակրթության զարգացման ընդհանուր օրինաչափությունները, տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած իրադարձությունները, ձեռք են բերում հարուստ գիտելիքներ՝ հայոց պատմությունը դիտարկելով համաշխարհային պատմության համատեքստում: Ուսումնասիրում են համաշխարհային պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանները, ծանոթանում պատմագիտական մտքի նվաճումներին, կատարում են պատմագիտական տեսությունների համեմատական վերլուծություն և պատմականորեն հիմնավորված եզրահանգումներ: Պատմագիտական դասընթացներին զուգընթաց ուսումնասիրում են իրավագիտական և հարակից այլ առարկաներ:

Բակալավրի շրջանավարտը կարող է ուսումը շարունակել մագիստրատուրայում:

Պատմության մասնագետին բազմակողմանի գիտելիքների իմացությունը հնարավորություն կտա հետագայում ճիշտ կողմնորոշվելու, սատար լինելու հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող Հայկական հարցի և Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործին, աշխատելու հասարակական, պետական տարբեր կառույցներում:

Հայրենիքը լավ ճանաչելու, պատմամշակութային և հնագիտական հուշարձաններին ծանոթանալու նպատակով ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ և համալսարանի աջակցությամբ կազմակերպվում են էքսկուրսիաներ, այցելություններ պատմական վայրեր, ուխտագնացություններ ղեպի հայոց սրբատեղերը: Պատմություն մասնագիտությամբ բակալավրի կրթական աստիճան ստացած շրջանավարտները կարող են գործունեություն ծավալել`

- ✓ հանրակրթական դպրոցներում,
- ✓ գիտահետազոտական ինստիտուտներում,
- ✓ մշակութային հաստատություններում,
- ✓ ուսումնագիտական կենտրոններում,
- ✓ խորհրդատվական կենտրոններում,
- ✓ հասարակական կազմակերպություններում,
- ✓ այլ մարմիններում:

Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)

Կրթական համակարգի ընդհանուր բարեփոխումների գործընթացում կարևորվում է մանկավարժական կրթության բարեփոխումը, բազմակողմանի զարգացած, ժամանակակից մանկավարժական մեթոդներին ու միջոցներին, ինչպես նաև դաստիարակության ու շտկողական աշխատանքների նորագույն տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը:

Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում լեզվաբանական, մաթեմատիկական, մանկավարժական և հոգեբանական գիտելիքներ, միաժամանակ խորացնում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն) իմացությունը, տիրապետում են համակարգչային տեխնիկային, արդյունավետ հաղորդակցման հմտություններին:

Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել հանրակրթական դպրոցներում, մանկավարժական գիտակրթական կենտրոններում, դաստիարակչական

հաստատություններում, շտկողական զարգացնող ծառայություններում, այլ մարմիններում:

Հունամիտար մասնագիտությունների ֆակուլտետում մագիստրոսական ուսուցումն ընթանում է Իրավագիտություն, Պատմություն, Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) ծրագրերով: Մագիստրատուրայում սովորելու հայտ կարող են ներկայացնել ինչպես Գավառի պետական համալսարանի, այնպես էլ հանրապետության այլ բուհերի բակալավրիատի լավագույն շրջանավարտները: Մագիստրատուրայի ուսանողները խորացնում են իրենց գիտելիքները ճյուղային և հատուկ իրավաբանական գիտակարգերում, ուսումնասիրում ազգային և միջազգային իրավական ինստիտուտներ, գրում ինքնուրույն աշխատանքներ, պատրաստում մագիստրոսական թեզ:

Ֆակուլտետը ակտիվ համագործակցում է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության և ՄԱԿ-ի փախստականների հանձնակատարի հայաստանյան գրասենյակների, միջազգային այլ կառույցների, պետական և հասարակական տարբեր կազմակերպությունների հետ:

ԳՊՀ հունամիտար մասնագիտությունների ֆակուլտետում դիմորդների ընդունելությունը կատարվում է՝

- 1) Իրավագիտություն,
- 2) Պատմություն,
- 3) Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) մասնագիտություններով:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Տնտեսագիտական մասնագիտությունները խիստ արդիական են շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում: Որակյալ տնտեսագետը գնահատված է մեր երկրում և աշխարհում: Տնտեսագետի աշխատանքն անհրաժեշտ է տնտեսության բոլոր բնագավառներում, հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում:

ԳՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպվում է երեք մասնագիտությունների գծով.

- 1) Ֆինանսներ,
- 2) Հաշվապահական հաշվառում,
- 3) Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում:

Ֆակուլտետում գործում են մասնագիտական 2 ամբիոններ՝

- 1) Կառավարման և ֆինանսների,
- 2) Հաշվապահական հաշվառման:

Ֆակուլտետում բոլոր մասնագիտությունների գծով իրականացվող կրթական ծրագրերն արդիական են և ներառում են նոր ձևաչափով նախատեսված կրթական ելքային արդյունքները, ինչը հնարավորություն է տալիս պատրաստելու մասնագիտական գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող շրջանավարտներ: Մասնագիտական ուսուցումն ընթանում է ըստ կրթական չափորոշիչների, որակավորումների ազգային շրջանակի և տնտեսագիտական մասնագիտությունների կրթական ծրագրերի պահանջների:

Ֆակուլտետում փոփոխվել ու նորացվել են դասավանդման ձևերն ու եղանակները, ինչպես նաև վերանայվել, թարմացվել ու հարստացել է կրթության բովանդակությունը: Դասավանդումը զուգորդվում է կրթական արդի տեխնոլոգիաների կիրառման, ուսուցման

ինտերակտիվ, համագործակցային, անձնակողմնորոշիչ, զարգացնող մեթոդների հետ:

Մշտապես համալրվում է ֆակուլտետի դասախոսական կազմը, հմուտ, անվանի դասախոսների կողքին աշխատում են երիտասարդ մասնագետներ: Կարևորվում է դասախոսների ոչ միայն մասնագիտական, մանկավարժական, այլև գիտահետազոտական գործունեությունը և նրանց մասնակցությունը հանրապետական ու միջազգային գիտաժողովներին: Ֆակուլտետի ուսանողներն իրենց մասնագիտական գիտելիքներն ամրապնդում են ուսումնական և արտադրական պրակտիկաների ընթացքում, Գեղարքունիքի և այլ մարզերի, ինչպես նաև մայրաքաղաքի ֆինանսատնտեսական կազմակերպություններում:

Կրթական ծրագրերն իրականացնելիս՝ ֆակուլտետը սերտորեն համագործակցում է Հայաստանի Հանրապետության տարբեր տնտեսական կազմակերպությունների, ֆիրմաների և աուդիտորական գրասենյակների, բանկերի մասնագիտական այլ կառույցների հետ:

Ուսանողներն օգտվում են բուհի համակարգչային լսարաններից, ինտերնետային կապից:

ԳՊՀ գրադարանում առկա են անհրաժեշտ հայալեզու և օտարալեզու տնտեսագիտական դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Ֆակուլտետի ուսանողները մրցութային կարգով ընդգրկվում են Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Անդրկովկասից դեպի Եվրոպա» ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրում, որին մասնակցում են 18 բուհ, այդ թվում՝ 6 եվրոպական առաջատար համալսարաններ: Ներկայումս տնտեսագիտության ֆակուլտետի լավագույն ուսանողները սովորում են Անգլիայի Շեֆիլդ համալսարանի Հունաստանի մասնաճյուղում, Հունաստանի Սալոնիկի տեխնոլոգիական և Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորության Սուանսեի Մետրոպոլիտենի համալսարաններում, Բելգիայի Գենտի համալսարանում և այլ առաջատար բուհերում:

Ֆակուլտետի շրջանավարտները մրցութային հիմունքներով աշխատանքի են ընդունվում բանկային, ֆինանսավարկային կազմակերպություններում, պետական կառույցներում, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններում:

Տնտեսագիտության ֆակուլտետում ուսուցման գործընթացը զուգորդվում է հետաքրքիր ուսանողական առօրյայով: Ուսխորհուրդը մշտապես կազմակերպում է ուսուցողական, ճանաչողական, դաստիարակչական, մշակութային և մարզական միջոցառումներ:

Ֆակուլտետում գործում է տնտեսագետների ակումբը: Այն կոչված է նպաստելու ուսանողների ընդհանուր և մասնագիտական աճին, ձևավորելու բանավեճի մշակույթ, հռետորական արվեստ, ինչպես նաև ընձեռելու երիտասարդ և ավագ սերունդների համագործակցության նոր հնարավորություններ:

Ավանդույթ է դարձել համալսարանի տրանսպորտային մի ջոցներով էքսկուրսիաների կազմակերպումը Հայաստանի տեսարժան վայրեր, ուխտագնացություններ դեպի պատմամշակութային համալիրներ: Ֆակուլտետի ուսանողները պարբերաբար մասնակցում են տարբեր ծրագրերի ու մրցույթների, որոնց արդյունքում նրանց հատկացվում է կրթաթոշակ: Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներին ֆինանսավորում են «Ժիրայր Նիշանյան հիմնադրամի կրթավճար» ծրագիրը, «Թրփանճեան ընտանեկան» և այլ հիմնադրամները:

Ֆակուլտետի բազմաթիվ ուսանողներ օգտվում են համալսարանի կողմից կիրառվող վարձավճարների զեղչերից, «ՎիվաՍել USU» և «Օրանժ. Հայաստան» ընկերությունների ու այլ բարեգործական կազմակերպությունների սահմանած կրթաթոշակներից:

Տնտեսագիտության ֆակուլտետում ուսուցումը հետաքրքիր է և ուսանողների համար ապահովված են որակյալ մասնագետներ դառնալու բոլոր հնարավորությունները:

ԳՊՀ-ում դուք կիրագործեք բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ձեր երազանքը:

Ֆինանսներ

Ֆինանսներ մասնագիտությունն անհրաժեշտ է հասարակության պատշաճ կենսագործունեության և տնտեսության տարբեր ոլորտներում ֆինանսական հարաբերությունների ձևավորման ու կանոնակարգման համար: Ֆինանսների մասնագետն իրականացնում է ժամանակակից ձեռնարկության ֆինանսական կառավարումը, կայացնում ինքնուրույն որոշումներ, լուծում խնդիրներ՝

դեկավարվելով ֆինանսատնտեսական բնագավառի ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներով:

Այս մասնագիտությամբ սովորող ուսանողները հիմնական կրթական ծրագրի շրջանակներում տիրապետում են աշխարհայացքային և մասնագիտական խոր գիտելիքների, ֆինանսատնտեսական բնույթի հիմնախնդիրների էությունը ընմբռնելու կարողությունների, ազգային և միջազգային տնտեսական համակարգերի փոփոխման և զարգացման ընդհանուր օրինաչափություններին և առանձնահատկություններին, տնտեսության իրական հատվածի և մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծության մեթոդներին: Ուսանողը պատկերացում է կազմում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման, ֆինանսական մեթոդաբանության զարգացման, տնտեսավարման արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակման և իրականացման կառուցակարգերի մասին: Ուսումնառության ընթացքում սովորողը հիմնավոր գիտելիքներ է ստանում ձեռնարկության վարկունակության գնահատման և ֆինանսական պլանավորման սկզբունքների, ծրագրային բյուջետավորման գործիքների, հաշվապահական փաստաթղթերի վերլուծության մեթոդների, ֆինանսատնտեսական տվյալների վերլուծության եղանակների վերաբերյալ:

Ֆինանսներ մասնագիտությամբ շրջանավարտը կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝

- ✓ պետական մարմիններում,
- ✓ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- ✓ բանկային համակարգում,
- ✓ ներդրումային և ապահովագրական կազմակերպություններում,
- ✓ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, հասարակական և այլ կառույցներում:

Հաշվապահական հաշվառում

Հաշվապահական հաշվառումը մասնագիտություն է կազմակերպությունների ֆինանսական և տնտեսական հաշվառումը վարելու վերաբերյալ: Այն առնչվում է տնտեսության տարբեր ճյուղերի կազմակերպությունների ընթացիկ գործունեության հաշվառմանը, թույլ է տալիս եռամսյակային և տարեվերջյան տնտեսական գործունեության արդյունքների հիման վրա կազմել հաշվապահական, ֆինանսական հաշվետվություններ, որոշել շահույթի /վնասի/ առկայությունը, դրա հիման վրա կատարել համապատասխան վերլուծություններ և անել եզրակացություններ՝ ուղղված տվյալ կազմակերպության գործունեության տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Հաշվապահը պետք է տիրապետի կազմակերպության վերաբերյալ ողջ տեղեկատվությանը, ունենա տեսական ու գործնական գիտելիքներ՝ աշխատանքը օպերատիվ կազմակերպելու նպատակով:

Հաշվապահական հաշվառման ոլորտի մասնագետի գործունեությունը պարտադիր կերպով իրականացվում է տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում և ուղղված է դրանց գործունեության սպասարկմանը՝ հետևյալ ուղղություններով.

- ✓ ազգային և միջազգային ստանդարտների պահանջների կատարում,
- ✓ համապատասխան, ժամանակակից տեխնոլոգիաներով հաշվապահական հաշվառման և աուդիտի կազմակերպում,
- ✓ արժանահավատ ֆինանսական հաշվետվությունների և հաշվարկների կազմում,
- ✓ հաշվետվությունների կազմման և հաշվառման որակի ներքին և արտաքին վերահսկողության իրականացում,
- ✓ կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծության կատարում:

Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ շրջանա վարտը կարող է աշխատել՝

- ✓ պետական մարմիններում,
- ✓ առևտրային կազմակերպություններում,
- ✓ ոչ առևտրային կազմակերպություններում,
- ✓ ֆինանսական և բանկային համակարգում,
- ✓ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- ✓ տարբեր կազմակերպատիրավական ձև ունեցող ընկերություններում,
- ✓ ինքնուրույն զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Շուկայական տնտեսության պայմաններում չափազանց կարևոր է ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը:

Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման մասնագետը իրականացնում է փոքր և միջին ձեռնարկությունների կառավարումը՝ հենվելով ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների վրա: Ուսումնառության ընթացքում ուսանողը տիրապետում է ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական խոր գիտելիքների, ծանոթանում ժամանակակից տնտեսագիտության և կառավարման գիտության նվաճումներին, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին, տիրապետում տնտեսության մրցունակության բարձրացման, հանրային ծառայությունների որակի բարելավման, տնտեսության տարբեր ոլորտներում ձեռնարկատիրական հարաբերությունների ձևավորման ու կարգավորման կառուցակարգերին: Ուսանողը պատկերացում է կազմում տնտեսական հարաբերությունների, ձեռնարկատիրական գործունեության կարգավորման ու կառավարման սկզբունքների և հմտությունների, շուկայում ձևավորվող իրավիճակների վերլուծության գործիքների, շուկայի ուսումնասիրման մեթոդների,

ընդհանուր շուկայի մոդելների, գների և արտարժույթի փոփոխության վերլուծության ձևերի մասին:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ ուսանողները նախ պատկերացում են կազմում.

- ✓ տնտեսագիտության տեսական դրույթների,
- ✓ գոյություն ունեցող տնտեսական համակարգերի,
- ✓ ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում պետության ու տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերու թյունների և գործառույթների մասին:

Աստիճանաբար յուրացնելով տեսական գիտելիքներ ու գործնական հմտություններ՝ նրանք կարողանում են՝

- ✓ կազմել բիզնես պլաններ,
- ✓ հիմնադրել ու ղեկավարել սեփական բիզնես,
- ✓ ուսումնասիրել և գնահատել տնտեսական գործունեությունը և մրցակիցների վարքագիծը:

Մասնագիտական գիտելիքներից զատ, ուսումնառության ընթացքում Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ սովորողներին ապահովվում է.

- ✓ օտար լեզուների իմացություն,
- ✓ համակարգչից օգտվելու և հաղորդակցվելու հմտություններ:

Շրջանավարտները կարող են դառնալ.

- 1) առևտրային կազմակերպությունների հաջողակ հիմնադիր ու բաժնետեր,
- 2) առևտրային կազմակերպությունների հնուտ գործադիր տնօրեն ու մասնագետ,
- 3) խոստումնալից անհատ ձեռնարկատեր,
- 4) տնտեսական ոլորտի ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպության աշխատակից,

- 5) տնտեսական ոլորտի հետ առնչվող պետական գերատեսչությունների (նախարարությունների, մարզպետարանների, հարկային, մաքսային և այլ մարմինների) աշխատակից,
- 6) պետական կամ համայնքային ծառայող,
- 7) բիզնեսին աջակցող ոչ առևտրային կազմակերպությունների փորձագետ,
- 8) փորձագետ-խորհրդատու:

Շրջանավարտները կարող են խորացնել իրենց մասնագիտական գիտելիքները և զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ:

Այսպիսով, տնտեսագիտական ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

- 1) Ֆինանսներ,
- 2) Հաշվապահական հաշվառում,
- 3) Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետը ձևավորվել է 2002-2003 ուսումնական տարում՝ առանձնանալով ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետից: Ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն կրթական ծրագրեր՝ ըստ հետևյալ մասնագիտությունների.

- 1) Իրավագիտություն,
- 2) Հաշվապահական հաշվառում,
- 3) Հայոց լեզու և գրականություն,
- 4) Ռուսաց լեզու և գրականություն,
- 5) Պատմություն,
- 6) Աշխարհագրություն,
- 7) Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության),
- 8) Կենսաբանություն,
- 9) Բնապահպանություն և բնօգտագործում,
- 10) Քարտեզագրություն և կադաստրային գործ,
- 11) Սերվիս,
- 12) Դեղագործական քիմիա,
- 13) Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա:

Հեռակա ուսուցման համակարգն ուսանողին հնարավորություն է ընձեռում աշխատանքին զուգահեռ ստանալ բարձրագույն մասնագիտական կրթություն: Հեռակա ուսուցման բովանդակությունը որոշվում է բարձրագույն կրթության հաստատված չափորոշիչներով, իսկ ուսումնական պլանը կազմվում է առկա ուսուցման համապատասխան մասնագիտության ուսումնական պլանի հիման վրա: Ուսումնական ծրագրերը կազմելիս՝ հաշվի են առնվում մասնագիտությանն առաջադրվող արդի պահանջները՝ աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակությունն ապահովելու նպատակով:

Բակալավթի կրթական ծրագրով հեռակա ուսուցման տևողությունը հինգ տարի է: Ուսումնական յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում անցկացվում են թե՛ դասախոսություններ, թե՛ գործնական, լաբորատոր, սեմինար պարապմունքներ: Դասընթացների ընթացքում ուսանողներին տրվում են մեթոդական ցուցումներ և խորհուրդներ՝ միջկիսամյակային ժամանակահատվածում ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու համար: Քննաշրջանում ստուգվում է ուսանողների նաև ինքնուրույն աշխատանքի արդյունքում ձեռք բերված գիտելիքների մակարդակը, կարևորվում են տեսական և գործնական իմացության զուգակցումը, ընդլայնումը և խորացումը:

Հեռակայող ուսանողի ինքնուրույն աշխատանքի հիմնական մասը համալսարանում անհատական աշխատանքների կատարումն է: Միաժամանակ յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում նախատեսված են միջանկյալ քննություններ: Յուրաքանչյուր կիսամյակից հետո Գավառի պետական համալսարանը հեռակայող բոլոր ուսանողներին ապահովում է հաջորդ կիսամյակի համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերով՝ ուսումնական ձեռնարկներով, դասախոսությունների տեքստերով, ինքնուրույն աշխատանքների կատարման համար մեթոդական ցուցումներով, ստուգողական աշխատանքների թեմաներով և անհրաժեշտ գրականության ցանկով, քննությունների հարցաշարերով այլ անհրաժեշտ փաստաթղթերով: Այս նպատակով համալսարանում ստեղծվել և գործում է էլեկտրոնային ուսուցման «E-learning.gsu» համակարգը:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում սովորում է ավելի քան հազար ուսանող:

**ԳՊՀ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ
ԴԻՍՈՐԴԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԿՈՒՄ Է
ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

h/h	Մասնագիտությունը	Ընդունելության քննություններ			Տեղեր	ուսման վարձը հազար դրամ
		Մրցութային			Ոչ մրցութային	
1.	Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ (գ)*	260
2.	Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ) **		Հլգ (գ)*	260
3.	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)		Հլգ (գ)*	260
4.	Բնապահպանություն և բնօգտագործում	Կ (գ)	Ֆ (գ)** կամ Ք (գ)**		Հլգ (գ)*	260
5.	Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)	Հլգ (գ)		260
6.	Իրավագիտություն	Հլգ (գ)	ՀԺՊ (գ)	Օտլ (գ)		360
7.	Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ) ** կամ Օտլ (գ) **	260
8.	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլգ (բ)	Ռլ (գ)		Հլգ (գ)*	260
9.	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	Հլգ (գ)	Մ (գ) **			260
10.	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		340
11.	Բնֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ (գ)*	260
12.	Սերվիս	Ա (գ) կամ ՀԺՊ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		260
13.	Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) կամ Ֆ (գ)		Հլգ (գ)*	260

Նշված վարձավճարները նախատեսված են 2015-2016 ուսումնական տարվա համար:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի դիմորդների գործերն ընդունվում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Գավառի պետական համալսարանում գործում է ուսանողների ակադեմիական շարժունության և ներբուհական տեղափոխության կարգը՝ սկսած երկրորդ կուրսից:

**ԳՊՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

Միջազգային համագործակցության ծրագրի շրջանակներում Համալսարանը կնքել է համագործակցության պայմանագրեր հետևյալ եվրոպական բուհերի հետ՝

- 1) Իտալիայի Պավիայի համալսարան,*
- 2) Իսպանիայի Կոռունայի համալսարան,*
- 3) Բելգիայի Գենտի համալսարան,*
- 4) Ֆինլանդիայի Ալտո համալսարան,*
- 5) Շվեդիայի Լինկոպինգի համալսարան,*
- 6) Մեծ Բրիտանիայի Բաթ-Սպա համալսարան,*
- 7) Գերմանիայի Հեյդելբերգի համալսարան,*
- 8) այլ առաջատար բուհեր:*

ԳՊՅ-ՈՒՄ ՍԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Բարձրագույն կրթություն առկա ուսուցման համակարգում՝ 16 մասնագիտությունների գծով,
- 2) Բարձրագույն կրթություն հեռակա ուսուցման համակարգում՝ 13 մասնագիտությունների գծով,
- 3) Նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար (ուսման վարձը՝ ամիսը 6000 դրամ),
- 4) Հետբուհական և լրացուցիչ կրթական ծրագրեր,
- 5) Օտար լեզուների ուսուցում,
- 6) Համակարգչային գրագիտության ապահովում,
- 7) Լրագրողների մասնագիտական դասընթացներ,
- 8) Նկարչական ստուդիա, դեկորատիվ դիզայնի ստուդիա ուսանողների համար,
- 9) Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ,
- 10) Որակավորման բարձրացման դասընթացներ տարբեր մասնագիտությունների տեր անձանց համար՝ շարունակական կրթության ծրագրի շրջանակում:

ԳՊՅ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

2003 թվականից Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLLI) օժանդակությամբ աշխատանքներ է ծավալում ԳՊՅ իրավաբանական կլինիկան, որը Գեղարքունիքի մարզի ազգաբնակչությանը մատուցում է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԳՊՅ իրավաբանական կլինիկան համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հետ, ամենամյա ծրագրեր է իրականացնում մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժների, սոցիալապես անապահով անձանց և այլ շահառուների համար:

Իրավաբանական կլինիկայի դասընթացն ավարտած ուսանողները ստանում են հավաստագրեր:

ԳՊՀ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՒՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑ

2006 թվականից Գավառի պետական համալսարանում դասավանդվում է «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացը, որին մասնակցում են բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողներ, ովքեր իրենց ընտրած մասնագիտությանը զուգընթաց մասնագիտանում են նաև լրագրության ուղղությամբ: Մեկ տարվա ընթացքում ուսանողներին դասավանդվում է տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկային վերաբերող առաջնային և անհրաժեշտ դասընթաց: Տեսական իմացությունից բացի, մեծ ուշադրություն է դարձվում գործնական աշխատանքներին:

Դասընթացի հիմնադիր և վարող Պապին Մուրադյանը, 2007 թվականի օգոստոսին վերապատրաստվելով Ֆրանսիայի CFPJ ժուռնալիստիկայի դպրոցում, կիրառում է դասավանդման նոր մեթոդներ ու սկզբունքներ: Շաբաթվա ընթացքում յուրաքանչյուր ուսանող ցանկացած ժանրով գրված իր նյութը էլեկտրոնային փոստով ուղարկում է դասավանդող մասնագետին, այնուհետև ստուգված նյութերը դասի շրջանակներում դառնում են քննարկման առարկա: Այսպիսով, ստեղծագործելու կարողություններ ունեցող ուսանողները վարպետանում են նաև լրագրության ոլորտում արդի չափանիշերին համապատասխան: Արդյունքում սովորողների պատրաստած նյութերի մի մասը, որոնք վերաբերում են Գավառի պետական համալսարանին, տեղադրվում են ԳՊՀ-ի www.gsu.am համացանցային կայքում, իսկ տարեվերջին տպագրվում են «Լրագրողի ծայն» ուսումնական թերթում: Բացի լսարանային պարապմունքներից, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ տարբեր լրատվամիջոցներում աշխատող փորձառու լրագրողների հետ:

Նախորդ տարիների ընթացքում շուրջ 80 ուսանողներ մասնագիտացել են լրագրության ոլորտում, և նրանցից մի քանիսն աշխատում են մարզի տպագիր ու էլեկտրոնային պարբերականներում:

Ուսանող լրագրողները պատրաստականորեն աջակցում են ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործունեությանը: Դասընթացի ավարտին ուսանողները հանձնում են ավարտական

քննություն՝ կրեդիտային համակարգի չափանիշներին համապատասխան, և ստանում հավաստագրեր:

ԳՊՀ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմինն է: Խորհրդի հիմնական նպատակն է ուսուցման կազմակերպման ու որակի ապահովման գործընթացում, հասարակական կյանքում համալսարանի սովորողների սոցիալական դերի և ակտիվության բարձրացումը, արդի հասարակական-տնտեսական պայմաններում ուսանողների որակյալ կրթությանը սատարումը, նրանց մասնագիտական, հոգևոր-մշակութային զարգացմանը նպաստումը:

ԳՊՀ ուսանողական խորհուրդն ակտիվորեն համագործակցում է բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, Գեղարքունիքի մարզի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Գավառի պետական համալսարանում գործում է ուսանողական գիտական ընկերություն: Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական զարգացմանը: Ընկերությունն աջակցում է ուսանողների նախաձեռնություններին և կազմակերպում ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ, գիտահանրամատչելի դասախոսություններ և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ: ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունը համագործակցում է այլ գիտական կենտրոնների հետ և նրանց հետ համատեղ կազմակերպում ուսանողական կոնֆերանսներ:

Համալսարանում ձեռնարկվում են բոլոր միջոցները՝ ուսանողական կյանքը հետաքրքիր և անմոռաց դարձնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսք5

ԳՊՀ-ում բակալավրիատում և մագիստրատուրայում
ուսուցանվող մասնագիտությունները.....7

ԳՊՀ ուսանողներին տրվող արտոնությունները10

Բանասիրական ֆակուլտետ 11

Բնագիտական ֆակուլտետ 16

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ26

Տնտեսագիտության ֆակուլտետ32

Հեռակա ուսուցման ֆակուլտետ39

ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրեր42

ԳՊՀ-ում մատուցվող կրթական ծառայություններ.....43

ԳՊՀ իրավաբանական կլինիկա43

ԳՊՀ տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի
դասընթաց.....44

ԳՊՀ ուսանողական կյանքը45

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1, 1201

Հեռախոսներ՝ 060 46 02 01, 060 46 12 99, 0264 2 57 75
060 46 03 02, 060 46 12 43

Ֆաքս՝ 060 46 02 01

Էլ. փոստ՝ info@gsu.am, infogsu@mail.ru

Կայքէջ՝ www.gsu.am